



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 սեպտեմբերի 2023 թվականի թիվ 91-Ա

ք. Երևան

**ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ և 11-րդ հոդվածների դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է՝**

Հրապարակել՝

1) տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ եզրակացությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները՝ համաձայն N 2 հավելվածի:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

22 սեպտեմբերի 2023թ.
ք. Երևան

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-ԻՑ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2023 թվականի հուլիսի 13-ի թիվ 1163-Ն որոշման համաձայն Երևանի ավագանու հերթական ընտրությունները (այսուհետ նաև՝ Ընտրություններ) նշանակվել են 2023 թվականի սեպտեմբերի 17-ին:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրն ու ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Երևանի ավագանու՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածն է 23.08.2023թ. – 15.09.2023թ. մինչև ժամը 24:00:

Նախընտրական քարոզչության համար ընտրական օրենսդրությամբ սահմանված տեսալսողական մեդիա ոլորտը կարգավորող բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) կողմից կատարվել են մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչն ապահովել է բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ և հնարավորություններ հենց նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից: Այսպիսով՝

Հանձնաժողովը 2023 թվականի հուլիսի 19-ին ընդունել է «Երևանի ավագանու՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին կայանալիք ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանելու մասին» թիվ 69-Ա որոշումը, որի համաձայն նախընտրական քարոզչության ժամանակահատվածում

վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը հանրային ռադիոյի համար սահմանվել է 1300 դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ հանրային հեռուստատեսության համար՝ 48000 դրամ (ներառյալ ԱԱՀ): Համեմատության համար՝ 2018 թվականի Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը հանրային ռադիոյի համար սահմանվել էր 2000 դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ հանրային հեռուստատեսության համար՝ 48000 դրամ (ներառյալ ԱԱՀ):

Հանձնաժողովը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմանների և քաղաքացիների (ընտրողների) համար անկողմնակալ, ստուգված և հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովման նպատակով 2023 թվականի հուլիսի 19-ին ընդունել է նաև «Երևանի ավագանու՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին կայանալիք ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 70-Ա որոշումը:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող հեռուստառադիոհեռարձակում իրականացնող մասնավոր հեռուստաընկերություններն ու ռադիոընկերությունները ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 5 օր հետո իրենց եթերով հրապարակում են իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքը և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել: Նշված տեղեկատվությունը վճարովի եթերաժամ տրամադրող տեսալսողական մեդիածառայությունների կողմից հրապարակվել է մինչև 2023 թվականի հուլիսի 19-ը:¹

¹ Նշվածին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ <chrome-extension://efaidnbmnnnnibpcajpcglclefindmkaj/http://tvradio.am/wp-content/uploads/2023/07/%D5%B4%D5%A5%D5%AF-%D6%80%D5%B8%D5%BA%D5%A5-2023-1.pdf>:

վճարովի եթերաժամ տրամադրելու վերաբերյալ լիցենզավորված ընկերություններից տեղեկատվություն տարածել են հետևյալ ընկերությունները՝

- Հանրապետական սփռում ունեցող հինգ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ՝ իրենց կողմից հեռարձակվող «ՇԱՆԹ», «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ»², «Ա-ԹԻՎԻ», «ԱՐՄԵՆԻԱ» և «ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրերով,
- Մայրաքաղաքային սփռում ունեցող հինգ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ՝ իրենց կողմից հեռարձակվող «5-ՐԴ ԱԼԻՔ», «ՖՐԻ ՆՅՈՒՋ», «21 ԹԻՎԻ», «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» և «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» տեսալսողական ծրագրերով,
- Հանրապետական սփռում ունեցող երկու տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ՝ իրենց կողմից հեռարձակվող «ՌԱԴԻՈ ԶԱՆ» և «ՌԱԴԻՈ ՀԱՅ» լսողական ծրագրերով,
- Մայրաքաղաքային սփռում ունեցող ութ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ՝ իրենց կողմից հեռարձակվող «ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ», «ՌԱԴԻՈ ՎԱՆ», «ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ», «ՄԵԿ ԷՖ ԷՄ», «ՓՈՓ ԷՖ ԷՄ», «ԶԱՐԿ ՖՄ», «ԼՐԱՏՎԱԿԱՆ ՌԱԴԻՈ FM 106.5» և «ՖՄ-105.5» լսողական ծրագրերով,
- Մարզային սփռում ունեցող մեկ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություն՝ իր կողմից հեռարձակվող «ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» լսողական ծրագրով:

Միայն հեղինակազորված³ ընկերություններից վճարովի եթերաժամ տրամադրելու վերաբերյալ տեղեկատվություն տարածել են չորս տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ՝ իրենց կողմից հեռարձակվող «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ», «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ», «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «ՀԻՔՐԻԴ ՖԻԼՄ» տեսալսողական ծրագրերով:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը 2023 թվականի օգոստոսի 17-ին տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների, իսկ օգոստոսի 21-ին Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական շտաբների ներկայացուցիչների համար կազմակերպել է «Երևանի ավագանու ընտրությունների լուսաբանման և նախընտրական քարոզչության առանձնահատկությունները» թեմայով հանդիպում-խորհրդակցություն, որի ընթացքում

² «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն գործում է մինչև նոր մրցույթի արդյունքների ամփոփումը և լիցենզիայի տրամադրումը կամ դրա հիմնավոր մերժումը:

³ Միայն ցանցային օպերատորի միջոցով հեռարձակողներ:

քննարկվել են Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը, ինչպես նաև ընտրական օրենսդրության պահանջները:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ

2023 թվականի սեպտեմբերի 17-ին նշանակված Երևանի ավագանու ընտրությունների համար առաջադրվել է 13 կուսակցություն և կուսակցությունների 1 դաշինք: Դրանք են՝ «Հայաստանի եվրոպական», «Ժողովրդավարական համախմբում», «Քաղաքացիական պայմանագիր», «Հանուն սոցիալական արդարության», «Ուժը հայրենյաց», «Հանրային ձայն», «Ազգային առաջընթաց», «Հաղթանակ», «Ապրելու երկիր», «Հանրապետություն», «Միացյալ Հայաստան», «Արդար Հայաստան», «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները և «Մայր Հայաստան» դաշինքը, որի կազմում «Երկիր ծիրանի» և «Ինտելեկտուալ Հայաստան» կուսակցություններն են:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Տեսալսողական և լսողական հաղորդումներ հեռարձակող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների (այսուհետ նաև՝ տեսալսողական մեդիածառայություններ մատուցողներ) կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:

2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ը ներառյալ Հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տեսալսողական մեդիածառայությունների՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն: Հանձնաժողովը տեսալսողական մեդիածառայություն մատուցողների հեռարձակած տեսալսողական ծրագրերի ընտրական օրենսդրության համապատասխանության մշտադիտարկումն իրականացնում է՝ հիմք ընդունելով

1. տեսալսողական ծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ուղղակի դիտարկման արդյունքները,

2. տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյաններում մուտքագրված տվյալները,

3. տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը,

4. ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների կողմից Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը,

5. պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների կողմից Հանձնաժողով պաշտոնապես ներկայացրած տեղեկատվությունը,

6. Հեռարձակողների կողմից Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության խախտումների մասին զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

Հանձնաժողովն ուղղակի դիտարկումն իրականացրել է պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում մշտադիտարկման արդյունքներն ու հանձնաժողովի եզրակացությունը հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ:

Հանձնաժողովը 2023 թվականի սեպտեմբերի 1-ին ընդունել է «Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և

եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 81–Ա որոշումը,⁴ որը ներառել է 2023 թվականի օգոստոսի 23-ից օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 1-ին:

Հանձնաժողովը 2023 թվականի սեպտեմբերի 11-ին ընդունել է «Տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 86–Ա որոշումը⁵, որը ներառել է 2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 20-րդ օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 11-ին:

Տեղեկատվությունը, որը ներառել է 2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքներն ու եզրակացությունը, պետք է հրապարակվի և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվի ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ 2023 թվականի սեպտեմբերի 22-ին:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի համաձայն՝ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 50 րոպե, հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 50 րոպե, իսկ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների եթերաժամից՝ ոչ ավելի, քան 15 րոպե: Երևանի ավագանու

⁴ Որոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝
<http://tvradio.am/?sessions=%d6%85%d6%80%d5%a1%d5%af%d5%a1%d6%80%d5%a3-%d5%bd%d5%a5%d5%ba%d5%bf%d5%a5%d5%b4%d5%a2%d5%a5%d6%80%d5%ab-2023-%d5%a9:>

⁵ Որոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝
<http://tvradio.am/?sessions=%d6%85%d6%80%d5%a1%d5%af%d5%a1%d6%80%d5%a3-11-%d5%bd%d5%a5%d5%ba%d5%bf%d5%a5%d5%b4%d5%a2%d5%a5%d6%80%d5%ab-2023-%d5%a9:>

ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի վճարովի հիմունքներով օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 50 րոպե, հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 80 րոպե: Եթերային ժամանակ տրամադրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով, որն ընդունվել է 2023 թվականի օգոստոսի 19-ի թիվ 47-Ա որոշմամբ:⁶

Վերոնշյալ կարգի համաձայն՝ հանրային հեռուստատեսությամբ տրամադրվող ոչ ավելի, քան 50 րոպե անվճար և ոչ ավելի, քան 50 րոպե վճարովի հիմունքներով եթերաժամը բաշխվել է հետևյալ կերպ՝

1) 2023 թվականի օգոստոսի 23-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 13-ը ներառյալ (22 օր)՝ օրը 2 րոպե անվճար և մինչև 2 րոպե վճարովի հիմունքներով,

2) 2023 թվականի սեպտեմբերի 14-ին և 15-ին (2 օր)՝ օրը 3 րոպե անվճար և մինչև 3 րոպե վճարովի հիմունքներով:

Եթերաժամանակի տրամադրման սկիզբ սահմանվել է ժամը 19:00՝ ըստ որոշման հավելվածով սահմանված ժամանակացույցի:

Նույն կարգի համաձայն՝ հանրային ռադիոյով տրամադրվող ոչ ավելի, քան 50 րոպե անվճար և ոչ ավելի, քան 80 րոպե վճարովի հիմունքներով եթերաժամը բաշխվել է հետևյալ կերպ՝

1) 2023 թվականի օգոստոսի 23-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 13-ը ներառյալ (22 օր)՝ օրը 2 րոպե անվճար և մինչև 3 րոպե վճարովի հիմունքներով՝ ժամը 13:40-ից,

2) 2023 թվականի սեպտեմբերի 14-ին և 15-ին (2 օր), ընդ որում՝

ա) ժամը 13:40-ից 1 րոպե անվճար և մինչև 4 րոպե վճարովի հիմունքներով,

բ) ժամը 21:30-ից 2 րոպե անվճար և 3 րոպե վճարովի հիմունքներով:

Եթերաժամի տրամադրումը սահմանվել է ըստ որոշման հավելվածով սահմանված ժամանակացույցի:

Ընտրական օրենսգրքի համաձայն Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կազմակերպում է առնվազն երկու նախընտրական բանավեճեր՝ ապահովելով մասնակցության հավասար պայմաններ բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար: Նախընտրական բանավեճերի հեռարձակումը պետք է լինի ուղիղ եթերով, իսկ տևողությունը՝ ոչ պակաս, քան 90 րոպե:

⁶ Նշվածին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝

chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgplecfindmkaj/https://res.elections.am/images/Decisions/19.08.23/23.47_A_19-08-2023.pdf:

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» (այսուհետ նաև՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերություն) ծրագրի ուղիղ եթերում նախընտրական բանավեճերը հեռարձակվել են 2023 թվականի սեպտեմբերի 12-ին և սեպտեմբերի 14-ին ժամը 22:00-ին, առաջինը 171 րոպե 52 վայրկյան տևողությամբ, իսկ երկրորդը՝ 150 րոպե 13 վայրկյան:

Առաջին նախընտրական բանավեճին մասնակցել են բոլոր կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակների 2-6 համարները, բացառությամբ «Ազգային առաջընթաց» կուսակցության: Երկրորդ նախընտրական բանավեճին պետք է մասնակցեին բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակների առաջին համարները, սակայն նախընտրական բանավեճին հրաժարվել են մասնակցել «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի քաղաքապետի թեկնածու Անդրանիկ Թևանյանն ու «Ազգային առաջընթաց» կուսակցության քաղաքապետի թեկնածու Հայկ Մարությանը:

Հայաստանի հանրային հեռուստաընկերությունն ապահովել է նախընտրական բանավեճերի մատչելիությունը լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար՝ տեղեկատվությունը ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ:

Ավագանու այս ընտրություններին առաջին անգամ էր գործում 2021 թվականին ուժի մեջ մտած Ընտրական օրենսգրքի լրացումն առ այն, որ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողների եթերաժամից՝ ոչ ավելի, քան 15 րոպե:

Վերոնշյալ նորմը վերաբերում էր «5-ՐԴ ԱԼԻՔ», «ՆՈՒՌ», «ՖՐԻ ՆՅՈՒՋ», «21 ԹԻՎԻ», «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ», «:ԲՈՒՆ ԹԻՎԻ», «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագրերին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարգով սահմանել էր նաև, որ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողների կողմից անվճար եթերաժամը տրամադրվում է 2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցությանը յուրաքանչյուր օրվա համար 1 րոպե տևողությամբ՝ որոշման հավելվածով սահմանված հերթականությամբ:

Ընձեռած անվճար վերոնշյալ եթերաժամից կուսակցություններն օգտվել են մասնակի, ինչը փաստում է հավելված 2-ում ներկայացված մշտադիտարկման ցուցանիշների աղյուսակը: Այսպես, բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքը օգտվել են «ՖՐԻ ՆՅՈՒՉ», «21 ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրերի անվճար կարգով տրամադրվող եթերաժամից, սակայն այլ տեսալսողական ծրագրերի անվճար եթերաժամից օգտվել են ոչ բոլորը:

Հատկանշական է, որ թեպետ Ընտրական օրենսգրքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացրած սոցիալական գովազդների հեռարձակման պահանջը դրված է միայն հանրային հեռարձակողի վրա, սակայն գրեթե բոլոր մասնավոր տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները, նպաստելով իրազեկված ընտրություն կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովմանը, իրենց ծրագրերում ևս ներկայացրել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սոցիալական գովազդները:

Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության վճարովի կարգով տրամադրվող եթերաժամի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամի ոչ խտրական տրամադրման սկզբունքի խախտումներ նշված ժամանակահատվածում չեն արձանագրվել:

Հաշվետու ժամանակահատվածում պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, ընտրություններին մասնակցող կուսակցություններից, կուսակցությունների դաշինքից, զանգվածային լրատվամիջոցներից և քաղաքացիներից դիմում-բողոքներ չեն ստացվել:

Հավելված 2-ում զետեղված աղյուսակում ներկայացված են նախընտրական քարոզչության՝ 2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքին հատկացված եթերաժամի վերաբերյալ տվյալներ՝

- անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը,
- վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը,
- լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը,
- այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը,

- լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ լրատվական թողարկումներից զատ այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը ներառում է ոչ միայն դրական, այլ նաև չեզոք և բացասական անդրադարձերը:

Հարկ է նշել, որ այն մեդիածառայություն մատուցող ընկերությունները, որոնք թեև հրապարակել էին իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, սակայն նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածում վճարովի կարգով տրամադրված եթերաժամ չեն ունեցել, ինչպես նաև չեն լուսաբանել նախընտրական քարոզչությունը լրատվական թողարկումներում կամ այլ հաղորդումներում, չեն ներառվել հավելված 2-ում, դրանք են՝ «ԷՅ ԴԻ ԹԻ» ՍՊԸ, «ԷՖ-ԷՄ» ՍՊԸ, «ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊԸ, ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱԶ՝ իրենց կողմից հեռարձակվող համապատասխանաբար «ՓՈՓ ԷՖ ԷՄ», «ՄԵԿ ԷՖ ԷՄ», «ԶԱՐԿ ՖՄ», «ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» լսողական ծրագրերով և «ՆՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ, «ՀԻՐՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ՝ իրենց կողմից հեռարձակվող համապատասխանաբար «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «ՀԻՐՐԻԴ ՖԻԼՄ» տեսալսողական ծրագրերով:

ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Հանձնաժողովի նախաձեռնությամբ 2023 թվականի սեպտեմբերի 4-ին վարչական վարույթ է հարուցվել «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության («ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» տեսալսողական ծրագիր) նկատմամբ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի խախտման հատկանիշներով, այն է՝ թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին (հանրաքվեի քարոզչության կողմերին) նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին տրամադրվող նախընտրական քարոզչական տեսալսողական հաղորդումները (Հանրային հեռարձակողի դեպքում՝ նաև օրենքով սահմանված անվճար եթերաժամը) պետք է էկրանի վրա պարտադիր անընդմեջ ուղեկցվեն «Նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն» լուսագրով, իսկ լսողական հաղորդումների դեպքում յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ պետք է հիշեցվի դրա մասին: Ընկերությունը Հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 90-Ա որոշմամբ ենթարկվել է վարչական տույժի:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ 2023 թվականի սեպտեմբերի 18-ին հարուցվել է ևս մեկ վարույթ՝ «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության («ՆՈՒՌ» տեսալսողական ծրագիր) նկատմամբ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի խախտման հատկանիշներով, այն է՝ «Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն իրականացնելը:» և «Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակմամբ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից, ինչպես նաև համացանցում գովազդի միջոցով արգելվում է:»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մշտադիտարկման ցուցանիշներից ակնառու է, որ առկա է առանձին տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքին հատկացված եթերաժամի որոշակի անհամաչափություն: Հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ այդ անհամաչափությունը պայմանավորված է կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի կողմից նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածում իրականացված միջոցառումների քանակական բաշխման տարբերություններով, ինչպես նաև կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի կողմից անվճար և վճարովի եթերաժամի օգտագործման, տեսալսողական ծրագրերում հյուրընկալվելու պատրաստակամությամբ:

Այսպիսով, ելնելով վերոնշյալից՝ Հանձնաժողովը տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերությունների կողմից 2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում տրամադրած և՛ կուսակցությունների, և՛ կուսակցությունների դաշինքի կողմից օգտագործված

Եթերաժամի արձանագրված անհամաչափությունը որպես տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների կողմից նախընտրական քարոզարշավին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի համար հավասար պայմաններ ապահովելու խախտում չի գնահատում:

Եզրափակելով, հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի նորմը, համաձայն որի Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողների եթերաժամից ոչ ավելի, քան 15 րոպե, Հանձնաժողովի կարծիքով ոտնահարում է լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների իրավունքները: Խնդրահարույց է նաև այն տեսանկյունից, որ լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների վրա օրենսդրությամբ արդեն իսկ դրված են բազմաթիվ պարտավորություններ, այդ թվում պետական տուրքի վճարներ, հեռարձակման վճարներ, մի շարք օրենսդրական պահանջների պահպանման պարտավորություններ, որոնք օրեցօր կրճատվող գովազդային եկամուտների և դիտելության նվազման պայմաններում էլ ավելի են ազդում տեսալսողական մեդիայի զարգացման և բովանդակության որակի վրա:

Մտահոգության տեղիք է տվել նաև այն փաստը, որ թեև «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը հայտարարություն էր տարածել առ այն, որ Երևանի ավագանու ընտրությունների լուսաբանման ընթացքում լրատվական հիմնական թողարկումների և նախընտրական գովազդի ժամանակահատվածում եթերազրկումներ չեն իրականացվելու, սակայն պարբերական բնույթ կրող անջատումները շարունակվել են: Այսպես, հանրային մուլտիպլեքսում «ՇԱՆԹ» տեսալսողական ծրագրի հեռարձակումը դադարեցվել է 2023 թվականի օգոստոսի 28-ին ժամը 9:28-ից մինչև ժամը 15:00-ն, ի հեճուկս այն փաստի, որ ընկերությունը օրվա ընթացքում նախընտրական քարոզչության համար տրամադրվող վճարովի ժամանակահատվածը հայտարարել էր ժամը 06:00-ից մինչև 23:59-ը: Նույն օրը հանրային մուլտիպլեքսում դադարեցվել է նաև «Ա-ԹԻՎԻ» ծրագրի հեռարձակումը՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 17:00-ն, թեպետ վճարովի եթերի տրամադրման ժամանակահատվածը սահմանվել էր ժամը 15:00-ից մինչև 20:00-ն: «ՖՐԻ ՆՅՈՒՋ» ծրագրի հեռարձակումը հանրային մուլտիպլեքսում ևս դադարեցվել էր 2023 թվականի

օգոստոսի 28-ին ժամը 12:01-ից մինչև ժամը 15:30-ն և 16:00-ից մինչև 18:30-ը: Նշված ծրագրի դեպքում էլ վճարովի եթերաժամի տրամադրման ժամանակահատվածը հայտարարվել էր 10:00-ից մինչև 23:55-ը: Հանրային մուլտիպլեքսում «ՇԱՆԹ», «Ա-ԹԻՎԻ» և «ՖՐԻ ՆՅՈՒՋ» տեսալսողական ծրագրերի հեռարձակումը դադարեցվել է նաև 2023 թվականի սեպտեմբերի 4-ին՝ «ՇԱՆԹ» տեսալսողական ծրագիրը՝ 08:00-ից մինչև 16:00-ն, «Ա-ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը՝ 07:00-ից մինչև 11:00-ն, 12:00-ից մինչև 14:00-ն, 15:00-ից մինչև 17:00-ն, իսկ «ՖՐԻ ՆՅՈՒՋ» տեսալսողական ծրագիրը՝ 10:06-ից մինչև 13:05-ն և 13:20-ից մինչև 17:25-ն: Վերոնշյալ տեսալսողական ծրագրերի հեռարձակումը դադարեցվել է նաև 2023 թվականի սեպտեմբերի 11-ին՝ «ՇԱՆԹ» տեսալսողական ծրագիրը՝ 07:00-ից մինչև 16:00-ն, «Ա-ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը՝ 06:00-ից մինչև 11:00-ն, 12:00-ից մինչև 14:00-ն և 15:00-ից մինչև 17:00-ն, իսկ «ՖՐԻ ՆՅՈՒՋ» տեսալսողական ծրագիրը՝ 06:40-ից մինչև 09:40-ն, 13:30-ից մինչև 18:15-ն և 21:15-ից մինչև 22:30-ն:

**ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ՝ 23.08.2023թ.- 15.09.2023թ.



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցությունների դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՀԱՆՐԱՅԻՆ ԶԱՅՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23' 57"	0' 00"	18' 40"	407' 51"	426' 31"
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	50' 00"	26' 46"	21' 18"	472' 48"	494' 06"
3	«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	46' 15"	0' 00"	24' 22"	404' 20"	428' 42"
4	«ՀԱՂԹԱՆԱԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	45' 47"	0' 00"	22' 04"	402' 25"	424' 29"
5	«ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	50' 00"	0' 00"	21' 42"	403' 12"	424' 54"
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	16' 00"	0' 00"	18' 20"	404' 05"	422' 25"

7	«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	35' 58"	2' 56"	14' 35"	72' 11"	86' 46"
8	«ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	42' 41"	0' 00"	20' 02"	341' 52"	361' 54"
9	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	48' 06"	17' 18"	24' 58"	401' 00"	425' 58"
10	«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 55"	0' 00"	23' 10"	459' 35"	482' 45"
11	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	36' 41"	0' 00"	19' 51"	461' 04"	480' 55"
12	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	43' 38"	0' 00"	22' 05"	401' 32"	423' 37"
13	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	50' 00"	46' 45"	21' 55"	405' 40"	427' 35"
14	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	49' 52"	39' 49"	19' 22"	257' 08"	276' 30"



«ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲԸ

«ԱՐՄԵՆԻԱ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցությունների դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	19' 21"	0' 00"	19' 21"
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	242' 13"	78' 09"	0' 00"	78' 09"
3	«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	21' 04"	0' 00"	21' 04"
4	«ՀԱՂԹԱՆԱԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	26' 23"	0' 00"	26' 23"
5	«ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	18' 38"	0' 00"	18' 38"
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	11' 38"	0' 00"	11' 38"
7	«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	10' 31"	0' 00"	10' 31"

8	«ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	14' 39"	0' 00"	14' 39"
9	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	21' 57"	0' 00"	21' 57"
10	«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	16' 15"	0' 00"	16' 15"
11	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	6' 50"	22' 02"	0' 00"	22' 02"
12	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	15' 53"	0' 00"	15' 53"
13	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	117' 46"	61' 37"	0' 00"	61' 37"
14	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	99' 11"	38' 39"	0' 00"	38' 39"



«ՇԱՆԹ» ՍՊԸ

«ՇԱՆԹ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցությունների դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	38' 00"	0' 00"	38' 00"
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	219' 10"	150' 09"	0' 00"	150' 09"
3	«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	70' 16"	0' 00"	70' 16"
4	«ՀԱՂԹԱՆԱԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	36' 08"	0' 00"	36' 08"
5	«ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	34' 11"	0' 00"	34' 11"
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	85' 52"	0' 00"	85' 52"
7	«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	36' 12"	0' 00"	36' 12"

8	«ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	36' 39"	0' 00"	36' 39"
9	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	3' 56"	93' 19"	0' 00"	93' 19"
10	«ՄԻԱՅՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	61' 25"	0' 00"	61' 25"
11	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	8' 38"	83' 05"	0' 00"	83' 05"
12	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	33' 53"	0' 00"	33' 53"
13	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	53' 15"	83' 11"	0' 00"	83' 11"
14	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	34' 58"	0' 00"	34' 58"



«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ
«Ա-ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցությունների դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	4' 49"	0' 00"	4' 49"
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	96' 55"	4' 35"	0' 00"	4' 35"
3	«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	4' 14"	0' 00"	4' 14"
4	«ՀԱՂԹԱՆԱԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	3' 34"	0' 00"	3' 34"
5	«ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	1' 59'	0' 00"	1' 59"
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 52"	0' 00"	0' 52"

7	«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	3' 30"	0' 00"	3' 30"
8	«ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 48"	0' 00"	0' 48"
9	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	3' 12"	0' 00"	3' 12"
10	«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	2' 19"	0' 00"	2' 19"
11	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	3' 27"	0' 00"	3' 27"
12	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	2' 37"	0' 00"	2' 37"
13	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	50' 16"	6' 21"	0' 00"	6' 21"
14	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	3' 16"	0' 00"	3' 16"



«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ
«ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցությունների դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	22' 40"	0' 00"	22' 40"
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	132' 49"	35' 13"	0' 00"	35' 13"
3	«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	25' 00"	0' 00"	25' 00"
4	«ՀԱՂԹԱՆԱԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	26' 00"	0' 00"	26' 00"
5	«ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	24' 50"	0' 00"	24' 50"
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	32' 15"	0' 00"	32' 15"
7	«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	28' 45"	0' 00"	28' 45"

8	«ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	24' 13"	0' 00"	24' 13"
9	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	30' 55"	0' 00"	30' 55"
10	«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	34' 42"	0' 00"	34' 42"
11	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	8' 38"	30' 01"	0' 00"	30' 01"
12	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	25' 50"	0' 00"	25' 50"
13	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	44' 26"	26' 30"	0' 00"	26' 30"
14	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	24' 13"	0' 00"	24' 13"



«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցությունների դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	31' 32"	0' 00"	31' 32"
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	138' 41"	50' 17"	56' 20"	106' 37"
3	«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	12' 11"	6' 30"	18' 41"
4	«ՀԱՂԹԱՆԱԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	11' 54"	0' 00"	11' 54"
5	«ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	9' 04"	0' 00"	9' 04"
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	12' 35"	0' 00"	12' 35"
7	«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	25' 10"	1' 30"	26' 40"

8	«ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	12' 59"	0' 00"	12' 59"
9	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	19' 21"	0' 00"	19' 21"
10	«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	3' 56"	28' 14"	0' 00"	28' 14"
11	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	18' 55"	0' 00"	18' 55"
12	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	14' 43"	0' 00"	14' 43"
13	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	48' 43"	18' 46"	1' 30"	20' 16"
14	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	157' 25"	55' 17"	41' 24"	96' 41"



«ՖՐԻ ՆՅՈՒՉ» ՍՊԸ

«ՖՐԻ ՆՅՈՒՉ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցությունների դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 00"	0' 00"	7' 57"	0' 00"	7' 57"
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 00"	124' 29"	7' 52"	344' 15"	352' 07"
3	«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14' 53"	0' 00"	7' 54"	1' 05"	8' 59"
4	«ՀԱՂԹԱՆԱԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14' 45"	0' 00"	8' 23"	180' 17"	188' 40"
5	«ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՅ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 00"	0' 00"	8' 04"	88' 10"	96' 14"
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	13' 00"	0' 00"	8' 05"	0' 50"	8' 55"
7	«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՅ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	11' 18"	0' 00"	5' 53"	258' 00"	263' 53"

8	«ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 00"	0' 00"	9' 18"	14' 13"	23' 31"
9	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 00"	0' 00"	7' 54"	183' 54"	191' 48"
10	«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	13' 50"	0' 00"	7' 54"	0' 00"	7' 54"
11	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14' 46"	0' 00"	8' 21"	187' 58"	196' 19"
12	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 00"	0' 00"	7' 47"	101' 06"	108' 53"
13	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 00"	45' 02"	8' 33"	199' 58"	208' 31"
14	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	14' 00"	0' 00"	8' 21"	9' 54"	18' 15"



«ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ
«ՆՈՒՌ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցությունների դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՀԱՆՐԱՅԻՆ ԶԱՅՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 00"	0' 00"	1' 10"	0' 00"	1' 10"
